



Հեռ.՝ (+37410) 551364;

Email: info@aarhus.am

Հասցե՝ Չաքենց 46

ՆԵՕԿ_14/13

15_08_2014

Երևանի քաղաքապետ պարոն
 Տարոն Մարգարյանին

Հարգելի պարոն Մարգարյան

Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք էջում տեղակայված «Ինտերակտիվ բյուջե 2014»-ի տվյալների համաձայն Երևան քաղաքի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանության համար 2014թ. նախատեսված է 1,746,248,200 դրամ, որից այսօրվա դրությամբ ծախսվել է 861,978,366 դրամը:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրինաի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով հասարակության տեղեկացվածության աստիճանի բարձրացման անհրաժեշտությունը, խնդրում եմ Երևանի Օրինու կենտրոնին տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. Ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների ի՞նչ աշխատանքներ են կատարվել, ո՞ր կազմակերպությունների կողմից և ի՞նչ գումարների սահմանում (խնդրում եմ ըստ տարածքների նշել կատարված աշխատանքները, ծախսված գումարների չափը և աշխատանքներն իրականացնող կազմակերպության անվանումը)
2. Նշված աշխատանքներն իրականացնելիս, Երևանի քաղաքապետարանը ի՞նչ չափանիշներով է առաջնորդվում, մասնավորապես՝

- 2.1 Մանկական խաղահրապարակներում հաշվի առնվում են արդյո՞ք երեխաների անվտանգության հարցերը
- 2.2 Մանկական խաղահրապարակներում ապահովվում է արդյո՞ք երեխաների անվտանգ շրջակա միջավայրը, մասնավորապես՝ ապահովվում է արդյո՞ք խաղահրապարակի տարածքի մաքրությունը, արդյո՞ք կատարվում են նմուշառումներ խաղահրապարակի հողից և ստուգվում են արդյո՞ք խաղահրապարակում տեղակայված պլաստմասյա նյութերի պարունակությունները:

Ակնկալում եմ հայցվող տեղեկատվությունը ստանալ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված ժամկետում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին:

Կանխավ շնորհակալություն

Երևանի Օրինու կենտրոնի
 համակարգող

Ս. Այվազյան